

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Գերազույն Հոգևոր խորհրդից Կանադայի հայոց թեմի թեմական խորհրդից խորին մըրահողությամբ լրելեկացավ, որ Մեծի Տան Կիլիկիո Կաթողիկոսությունը ցավալի իր վախճանին է հասցրել Ամենայն Հայոց Հայրապետության կանոնական գարանք հանդիսացող Կանադայի հայոց թեմում գուգահեռ վարչական կառույց հասպարենու գործընթաց՝ հակառակ Ամենայն Հայոց Կաթողիկոսի և Գերազույն Հոգևոր խորհրդի եղբայրական հորդորների:

Սույն քայլը եկեղեցաբանական և նվիրապետական առումներով, ինչպես և հայ ժողովրդի հոգևոր միասնության անխարթառության պահպանության իմաստով չունի որևէ արդարացի բացաբարություն և հիմնավորում:

Երևոյթն ավելին է, քան հակականուսական ևս մեկ թեմի ծնունդը: Այն հասպարում է, որ Մեծի Տան Կիլիկիո Կաթողիկոսությունը պատրաստ է վերանայելու 1956 թվականին որդեգրած պատրաստողական ողին և Մայր Աթոռի հետ համախորհրդաց վերականգնելու կանոնական վիճակը Հայ Եկեղեցու ներս: «Մեկ ազգ, մեկ Հայրենիք, մեկ Եկեղեց» կարգախոսին իր նվիրվածության հավաստիացումներին հակառակ, Մեծի Տան Կիլիկիո Կաթողիկոսությունը «նոր վերադասավորումներով» հետևողականորեն փորձում է ընդարձակվել և ամրագրվել սառը պատրեազմի օրերին բաղաքական շարժադիմներով Ամենայն Հայոց Կաթողիկոսությունից գրաված թեմերում՝ խորացնելով բաժանումը Հայ Եկեղեցու մեջ և վրասեկելով 1988 թվականից ի վեր Մայր Աթոռի հետ բարեկավագած հարաբերությունները:

Մեծի Տան Կիլիկիո Կաթողիկոսությունը չի ցանկանում գիտենել արդի աշխարհում փոփոխված իրավիճակները, Հայրենիքի անկախության իրողությամբ պայմանավորված իրամայականները և արժեվորել ենր ժամանակների ողին, որ պահանջ է առաջադրում վերականգնել ու անխարար պահել Հայ Եկեղեցու և ազգի միությունը:

Հայ Եկեղեցու գերազույն և անասց արժեք հանդիսացող աշխարհասիյուն մեր ժողովրդի միասնականությունն ու միությունը խախտելու ցանկացած փորձի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը հակադրելու է այդ միությունն անխախտ ու անսասան պահելու վճռական իր հասպարակամությունը:

Սուրբ Էջմիածինը դիմում է Կանադայի և Մայր Աթոռից գրաված բոլոր թեմերի հավաքավոր զավակներին՝ հայրներով, որ ասփոփիս է իր հայրական սերը բոլորի համշառ, քանզի ինչ ձևակերպումներով և առ «ժողովրդի կամք» վաղուց հայրնի հղումներով էլ փորձ արվի արդարացնել նման քայլերը, անբարակույս է, որ ոչ մի ժողովուրդ չի կարող ունենալ պատակված լինելու ցանկություն:

Մայր Աթոռը վերասփին եղբայրաբար ողջախոհության է կոչում Կիլիկիո Կաթողիկոսությանը ու ողջունում ամեն քայլ՝ ուղղված երկիրեկվածության հաղթահարմանը և կանոնական վիճակի վերահասպարմանը Հայ Եկեղեցում, և հրավիրում է իր զավակներին՝ նախանձախնդիր ու միասնական լինելու բարդ ժամանակների թեմադրամբով ծնունդ առած երկապառակության՝ շուրջ կեսդարյա խնդրի կարգավորման ճանապարհին: «Սիրո գերագահություն»՝ ահա Մայր Աթոռի վերագահության խորհրդից ինչպես երեկ, այնպես էլ այսօր և հավիրյան:

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՇՈԳԵՎՈՐ ԽՈՐՃՈՒՐԴ

Ս. Էջմիածին,
2 ապրիլի 2004 թ.